ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 08.12.2017-22.12.2017ԹԹ. ՀԱՐՑՄԱՄԲ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՆԻՍՏԻ

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ԿԱ քաղաքաշինական պետական կոմիտեի նախագահի «ՀՀԿՀ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» հրամանի նախագծի քննարկում և կարծիքների ներկայացում:

Ս.թ. դեկտեմբերի 8-ից դեկտեմբերի 22-ը տեղի է ունեցել հարցմամբ անցկացվող Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի հերթական նիստը, որի ընթացքում քննարկվել է ՀՀ ԿԱ քաղաքաշինական պետական կոմիտեի նախագահի «ՀՀԿՀ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» հրամանի նախագիծը:

Հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջարկությունները և առարկությունները (կցվում են) ներկայացվել են ՀՀ ԿԱ քաղաքաշինական պետական կոմիտե:

Առդիր՝ 7 էջ:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա.ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ԿԵՍՈՅԱՆ**

26.12.2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

« 22 » 12. 2017 թ. N ԱԱ/ԱԿ-2-5/13589-17

Ձեր 12.04.2017թ. թիվ 01/14.2/7303-17

ՀՀ ԿԱ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ն. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

«ՀՀԿՀ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի հրամանի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ առաջարկում եմ.

1) Նախագծի վերնագրում և ամբողջ տեքստում «Բնակչության սակավաշարժ խմբեր և հաշմանդամություն ունեցող անձանց» բառերը փոխարինել «Տեղաշարժվելու դժվարություններ ունեցող անձանց» բառերով,

2) Նախագծում «հիվանդություն», «արատ», «խեղում», «խանգարում» բառերը փոխարինել «խնդիրներ» բառով,

3) Նախագծում ներկայացված՝ տարբեր խնդիրներով տեղաշարժվելու դժվարություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման քաղաքաշինական նորմերի առանձին հարաչափերը և մոդելավորումները մեկտեղել, որը համահունչ կլինի համընդհանուր դիզայնի սկզբունքներին,

4) Նախագիծը տեղադրել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքէջում (www.e-draft.am)՝ հաշվի առնելով, որ այն հասարակության լայն շերտերին առնչվող խնդիրների լուծմանը միտված իրավական ակտ է:

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմանների ստեղծման և հավասար հնարավորությունների ապահովման տեսանկյունից հաշվի առնելով Նախագծի կարևորությունը՝ այն քննարկվել է նաև ՀՀ վարչապետի 2008 թվականի փետրվարի 25-ի N 98-Ն որոշմամբ ստեղծված Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նիստում:

Հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջարկությունները և առարկությունները կցվում են:

Առդիր՝ 5 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կատարող՝ հաշմանդամների և տարեցների
հիմնահարցերի վարչություն,
Հեռախոս՝ 055/010 52-17-61

Դիմումատուի տվյալներ և դիմում

Անուն, Հայրանուն, Ազգանուն
Լևոն Ներսիսյան

Էլեկտրոնային փոստ
levast@yahoo.com

Հեռախոսահամար

Հասցե

Սոցիալական քարտ

Անձնագիր

Դիմում

Հարգելի գործընկերներ՝ «ՀՀԿՀ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու» կանոնակարգը շատ ենք կարևորում, քանի որ, նրա կիրառումը և իրավական հետևանքները շոշափելի ազդեցություն կունենան նախագծաշինարարական համակարգի վրա: <Աստղիկ> հկ-ի կողմից, դեռ 2003թ. նմանատիպ փորձ էր <<Քաղաքաշինությունը՝ որպես հաշմանդամների ինտեգրման նախապայման>> ուղեցույցը, որը ի հակառակ ՀՀԿՀ 23-101-2017–ի խորհրդատվական նպատակ ուներ:

Մեր հպանցիկ դիտողականության մի քանի առաջարկություններ՝

ա/ «ՀՀԿՀ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու» կանոնակարգի թերթերի վրա գրված է ՀՀՇՆ՝ հիմա այս փաստաթուղթը ՀՀԿՀ է թե ՀՀՇՆ:

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Կետի 5-րդ տողում գործառնական նշանակության մատչելի շենքերի արտահայտության մեջ բացառել մատչելի բառը:

2. Կետի 2-րդ տողում քաղաքաշինական հարմարավետ միջավայրի ձևավորման արտահայտության մեջ բացառել հարմարավետ բառը:

3 և 4 կետերը պետք է վերախմբագրել բացառելու հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության ակնհայտ դրսևորումը, որը

հակասում է ՀՀ Սահմանադրությունը ,«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիային և այլ միջազգային ակտերին:

II. ՆՈՐՄԱՏԻՎ ՀՂՈՒՄՆԵՐ -Ը

Կարելի է ավելացնել օգտագործված նյութեր և փաստաթղթեր արտահայտություններ իսկ ներքևում ավելացնել ցանկը:

IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. Կանոնների հավաքածուում տրվում են ճարտարապետական լուծումների, նախագծային միջոցառումների կազմի ընտրությունը: Դրանց իրականացումը սահմանվում

են նախագծային առաջադրանքով, ինչպես նաև նախագծման ընթացքում:

-ՈՒմ կողմից տրված նախագծային առաջադրանքով ? .՝ պատվիրատուի թե տեղական իշխանության:

V. ԳՈՏԻՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՉԱՓԵՐԸ

V.1 Հիմնական գործառական գոտիները թիկնաթոռ սայլակով հաշմանդամություն

ունեցող անձանց համար

Գծապատկեր 8. Հաշմանդամություն ունեցող անձանց շարժման գոտու հարաչափերը-ում ,

Գ կետում նշված է էլէկտրական սայլակ, բայց գծապատկերում մեխանիկական:

V.3 Եզրաչափքերը և էրգոնոմետրիկ հարաչափերը տեսողական արատ ունեցող

անձանց համար

տեսողական արատ ունեցող բառակապակցությունը փոխարինել տեսողական խնդիրներ

ունեցող բառակապակցությամբ և հետագայում բոլոր տեղերում

Գծապատկեր 18. Անցում մայթից դեպի փողոցի երթևեկելի մաս-ի կտրվածքում 25-40չափը սխալ է դրված:

Պետք ասել, որ հաշմանդամները միշտ բողոքում են այդ վերազանցումից, քանի որ այն դժվարացնում է շարժումը: Կարծում եմ, որ այն պետք վերացնել, քանի որ, այն նախկին ՎՍՆ-ից մնացած ատավիզմ է:

VI.5 Ավտոկայանատեղեր -ի բաժնում բացակայում է, թե քանի ավտոկայանատեղ է պահանջվում հասարակական նշանակության ավտոկայանատեղերում: Կարելի է օգտվել ամերիկյան նորմերից՝ օրինակի համար 1-25 մեքենայի համար՝ 1տեղ,26-50՝2տեղ,51-75՝3տեղ, 76-100՝4տեղ և այդպես շարունակ:

Գծապատկեր 33. Շենքերի մուտքեր-ի նկարներում թեքահարթակների թեքությունները ըստ աստիճանների քանակի տեսողական չեն համապատասխանում նորմատիվային պահանջներին : կարելի է թեքհարթակների վրա գրել նոմատիվային թեքությունները:

Գծապատկեր 45. Թեքահարթակների հիմնական հարաչափերը-գծագրում, կարելի է գրել նաև անկյունային համարժեքները՝ օրինակ 1:10=10%,=5՝42՝38՝՝, քանի որ ձեռնարկից կարող են օտվել ոչ մասնագետները:

Այս ձեռնարկը ևս մեկ քայլ առաջ է հաշմանդամություն ունեցող անձաց իրավունքների պաշտպանության ոլորտում և այդ առիթով պետք է ողջունել այն նախաձեռնողներին և հեղինակային խմբին:

Հարգանքներով՝

Լևոն Ներսիսյան

«Աստղիկ» ՀԿ-ի նախագահ

21.12.2017թ.

FULL LIFE
ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ

Դեկտեմբերի 22, 2017 թ.
Թիվ Ե1 – 050

ՀՀ հաշմանդամություն ունեցող անձանց
հարցերով ազգային հանձնաժողովի քարտուղար
պարոն Ա.Կեսոյանին

Հարգելի պարոն Կեսոյան,

ս/թ դեկտեմբերի 13 –ին մեզ ներկայացրած «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու» ի վերաբերյալ հայտնում եմ, որ այն, այս տեսքով ընդունելի չէ և հիմնովին վերանայման և լրամշակման կարիք ունի, բացի այդ, կարծում եմ, որ նման փաստաթղթի հրապարակ իջեցումը նպատակահարմար է ներկայումս ՀՀ ԱԺ- ում գտնվող «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» օրենքի նախագծի ընդունումից հետո, որպեսզի այն բխի նշված օրենքից , ներառյալ օգտագործված սահմանումները և հասկացությունները:

Հարգանքով՝

Սուրեն Մաղաքյան
«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ

ՀՀ, ք. Երևան,0048, Նորաշեն թաղամաս, 36/121, Հեռ. + 374 60 755155, էլ. փոստ office@fulllife.am , www.fulllife.am

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության
«ՈՒՆԻՍՈՆ» հասարակական կազմակերպություն

UNISON Non-Governmental Organization
for Support of People with Special Needs

#12-19
«21» դեկտեմբեր 2017թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ
պրն Ա.Կեսոյանին

Հարգելի պարոն Կեսոյան,

Ի պատասխան Ձեր գրությանը, հայտնում եմ դիրքորոշումս:
Շատ ողջունելի եմ գնահատում Քաղաքաշինության պետական կոմիտեի նախաձեռնությունը՝ կապված «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների
հավաքածու»-ի մշակման հետ: Համոզված եմ, որ Հավաքածուն լուրջ խթան կհանդիսանա ՀՀ-ում մատչելիության ապահովման գործում:
Հաշվի առնելով վերոնշյալ փաստաթղթի կարևորությունը, անհրաժեշտ եմ գտնում կազմակերպել լրացուցիչ քննարկում Հավաքածուի հեղինակների հետ՝ որոշ հարցերի պարզաբանման և շտկման նպատակով: Խոսքը, մասնավորապես, գնում է սանհանգույցների և սեղանների՝ սայլակ օգտագործող անձանց համար մատչելիության մասին: Կան նաև որոշ այլ քննարկվելիք խնդիրներ:

Հարգանքով՝

Արմեն Ալավերդյան
«Ունիսոն» ՀԿ գործադիր տնօրեն
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամ

Երևան 0002, Դեմիրճյան 36, «Ունիսոն» ՀԿ, հեռ./ֆաքս՝ 522170, բջջ. (077) 774277
Unison, 36 Demirchyan St., Yerevan 0002, Armenia
tel./fax: (+37410) 522170, cell: (+37477) 774277
www.unison.am unison@unison.am